

## Կրթության դերը քաղաքական իմիջի կերտման համատեքստում

Հովսեփյան Մ.Մ., Ծատրյան Հ.Զ.

Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոն / Հայաստան, Երևան/  
htsatryan@ysu.am

Վճռորոշ քառեր՝ կրթություն, կրթված հասարակություն, քաղաքական գործիչ, թեկնածու, քաղաքական իմիջ, քաղաքական PR տեխնոլոգիաներ, մեդիա, նախընտրական գործընթացներ, ընտրություններ

### Роль образования в контексте формирования политического имиджа

Овсебян М.М., Цатрян А.З.

Ереванский государственный университет, кафедра печатных и вещательных СМИ факультета журналистики (Армения, Ереван)  
htsatryan@ysu.am

**Резюме:** Одним из основных инструментов демократизации общества - обеспечение образования. Однако, как ни странно это звучит, не во всех демократических странах глава государства становится образованный человек, который стоит на вершине иерархической системы управления. Похоже, что полученное образование должно еще больше обеспечить социальную мобильность человека, позволяя последнему проявляться в среде, в которой он или она первоначально хотел/а появиться, получив свое выбранное образование или специализацию. Однако в политике не все так ясно, как кажется. В статье представлена важная роль к образованию кандидата в контексте формирования политического имиджа и его значимость во время избирательных кампаний, когда создается позитивное отношение через СМИ.

**Ключевые слова:** образование, образованное общество, политический деятель, кандидат, политический имидж, политические PR технологии, медиа, предвыборные процессы, выборы

### The Role of Education In the Context of Formation of Political Image

Hovsepyan M.M., Tsatryan H.Z.

Yerevan State University, Faculty of Journalism,  
Head of Printed and Broadcast Media Chair (armenia, Yerevan)  
htsatryan@ysu.am

**Abstract:** One of the main instruments of democratization of the society is the proper provision of education. However, no matter how strange it sounds, not in all democratic countries the head of the state becomes an educated person, who stands on the top of a hierarchical system of governance. It seems that the education that he or she has received should further ensure the social mobility of the person, allowing the latter to appear in the environment in which he or she originally wanted to appear by gaining his / her chosen education or specialization. However, in politics not everything is as simple as it seems. This article presents the important role of candidate's education in the context of formation of political image and its importance during election campaigns when a positive attitude is created through the media.

**Keywords:** education, educated society, politician, candidate, political image, political PR technologies, media, pre-election processes, elections

Կրթված հասարակություն ունեցող երկիրն ունակ է առավել արագ ու սրընթաց զարգանալ, քան այն երկիրը, որտեղ հասարակության զգալի մասը չունի պատշաճ կրթություն: Կիրթ մարդն այնպիսի ռեսուրս է, որին կարելի է օգտագործել քաղաքական շրջապատում լուսավորություն տարածելու համար: Եթե քաղաքական լիդերը կրթված չէ, ապա դժվար է նրանից ակնկալել ինչ-որ զարգացում կամ առաջընթաց: Այստեղ կրթությունը ոչ

միայն դիպլոմավորված մասնագետ լինելն է: Անկիրթ ղեկավարը հաճախ չի կարող գնահատել հնարավորությունները և հանդես բերել երկրի զարգացման իրական ծրագիր: Այս ամենի մասին գերազանց գիտեն քաղաքական PR տեխնոլոգիաներ ուսումնասիրողները և քաղաքական խորհրդատվությամբ զբաղվողները:

Վերոնշյալը պնդումները գրեթե ապացուցման կարիք չունեցող իրողություն են: Շատ

երկրներում այսօր քաղաքական գործիչների՝ պաշտոններ զբաղեցնելու համար առաջ է քաշվում կրթական եթե ոչ պարտադիր, ապա գոնե նվազագույն անհրաժեշտ ցենզ. օրինակ, եթե քաղաքացին ցանկանում է ԱՄՆ-ում կամ Մեծ Բրիտանիայում զբաղվել քաղաքականությամբ, քաղաքական գործիչ դառնալ ու պետական պաշտոն զբաղեցնել, ապա նա հետագա խնդիրներից՝ մամուլի կամ մյուս լրատվամիջոցների կողմից ծաղրի, պարսավանքի չենթարկվելու համար պետք է գոնե ունենա համապատասխան կրթական ցենզ, լինի դիպլոմավորված մասնագետ<sup>1</sup>, որը թույլ կտա մի քանի տարիների ընթացքում հնարավորինս բարձրանալ քաղաքական աստիճաններով, հակառակ դեպքում մեղիան կարող է չար կատակ խաղալ նրա անվան հետ: Իրավիճակը նույնն է Ճապոնիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և բազմաթիվ եվրոպական երկրներում: Կիրթ առաջնորդների խնդիր ունի նաև Հնդկաստանը<sup>2</sup>: Գրեթե հնարավոր չէ քաղաքականության մեջ մտնել՝ առանց կրթվածության, ինչպես նաև կիրթ մարդու մեղիախմիջ ստեղծելու: Հատկապես վերջինը շատ կարևոր է քաղաքական դրական PR-ի տեսանկյունից:

Կրթության դերը կարևոր է ոչ միայն քաղաքական հաջողված իմիջ ստեղծելու համար: Անձի, քաղաքացու ձևավորման ու զարգացման գործընթացը նախ սկսվում է խաղային ձևերի ընդօրինակմամբ, ապա անցնում է ուսումնառությանը, այնուհետև աշխատանքային գործունեության: Կան պնդումներ, որ համակարգված ուսուցումը պլանային ներգործություն է ունենում մարդու, քաղաքացու իմացական կարողությունների, հոգեկան հատկությունների ու ընդհանուր զարգացման վրա: Ուսումնառության տարիներին մարդը հաղորդակցվում է գիտությանը, զարգացնում իր գրավոր և բանավոր խոսքը, նաև տրամաբանական մտածողությունը: Ուսուցումն իրա-

կանացնում է նաև մարդու զարգացման ու դաստիարակման խնդիրներ<sup>3</sup>:

Հետևաբար, քաղաքական գործիչը նախևառաջ ձևավորվում է կրթության շնորհիվ: Այստեղ է, որ ներդաշնակվում է քաղաքացու մտավոր, ֆիզիկական ու հոգևոր կարողությունների փոխկապակցված զարգացումը: Մարդկային զարգացումն ընդհանրապես իր մեջ ներառում է պատշաճ կենսամակարդակ, կրթություն և առողջապահություն: Լավ կրթությունը ընդլայնում է մարդու հնարավորությունները գիտելիքների և մասնագիտական կարողությունների ձեռքբերման ոլորտում, ձևավորում է հանրային զարգացման կարևոր բաղկացուցիչներից մեկը՝ մարդկային կապիտալը, ստեղծում է կյանքի որակ և ծառայում որպես տնտեսական աճի աղբյուր: Ամենի համատեքստում պատահական չէ, որ զարգացած ու զարգացող երկրներում առավել մեծ ուշադրություն և միջոցներ են հատկացնում կրթության կարգավորման խնդրին<sup>4</sup>: Կրթությունը անձի ձևավորման և զարգացման, իմացական գործունեության եղանակների տիրապետման, գիտելիքների հաղորդման, կարողությունների, հմտությունների մշակման, նաև անցյալի փորձի յուրացման գործընթաց է, ասել է թե զարգացում ապահովող կարևոր բաղադրիչ: Մարդկային ներուժի զարգացման կարևորագույն խնդիրը հանրային կրթության մակարդակն է, որն էլ բնութագրվում է երկրի չափահաս քաղաքացիների գրագիտությամբ՝ ձեռք բերված տարրական, միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Եվրոպական զարգացած երկրներում, ԱՄՆ-ում կրթված մարդը քաղաքականության մեջ ճկուն ռեսուրս է, որի ստացած կրթությունը օգտագործվում է հանրային շահի սպասարկման համար: Ըստ էության՝ ձևավորվում է այնպիսի քաղաքական իմիջ, որ կրթված քաղաքական գործիչն է միայն ունակ իր երկրի, հասարակության համար արդյունավետ որո-

<sup>1</sup> Տե՛ս Patil A., What it means to have an uneducated leader, liveMINT, հրատարակված է սեպտեմբերի 28, 2013թ., հասանելի է՝ [\[https://www.livemint.com/Leisure/JJBNMeTBDxPN187zJVOC0J/What-it-means-to-have-an-uneducated-leader.html\]](https://www.livemint.com/Leisure/JJBNMeTBDxPN187zJVOC0J/What-it-means-to-have-an-uneducated-leader.html):

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս *Բազիլյան Հ.*, Կրթության միջոցով մարդկային կապիտալի ձևավորումը՝ որպես կյանքի որակի և տնտեսական աճի աղբյուր, հրատարակվել է՝ մայիսի 1, 2007թ., հասանելի էր 18.02.2018-ին՝ [\[http://iravaban.net/1728.html\]](http://iravaban.net/1728.html):

<sup>4</sup> Տե՛ս Hunt R.A., Does the U.S. President Need a College Degree?, Bloomberg, հրատարակված է փետրվարի 1, 2015թ., հասանելի է՝ [\[https://www.bloomberg.com/view/articles/2015-02-01/does-the-u-s-president-need-a-college-degree-\]](https://www.bloomberg.com/view/articles/2015-02-01/does-the-u-s-president-need-a-college-degree-):

շումներ կայացնել: Ինչ-որ երկրի առաջնորդ կամ մի շրջանի ղեկավար նախնառաջ պետք է պատկերացում ունենա իր երկրի (շրջանի) խնդիրների մասին: Այս համատեքստում պընդումը, թե միայն կրթված քաղաքական գործիչն է ունակ հնարավոր առաջընթացի ուղին զանազանելու հետընթացից՝ անելով համապատասխան վերլուծություններ ու դիտարկումներ, տեղին է:

Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում կրթության հայեցակարգն այնպիսին է, որ թույլ չի տրվում լիարժեք կրթություն չստացած կամ թերուս մարդուն բարձր պաշտոն զբաղեցնել պետական հատվածում: Մա արդեն ամրագրված է այս երկրների քաղաքական մշակույթում: Օրինակ, առ այսօր Հարրի Թրումենից հետո ԱՄՆ-ում չեն ընտրել նախագահի, որը չի ունեցել բարձրագույն կրթության աստիճան: ԱՄՆ Սենատի բոլոր անդամները նույնպես ունեն կրթական աստիճան: Եթե ինչ-որ բացառություն է տեղի ունենում ու թեկնածուներից մեկը չունի կրթական աստիճան, ապա վերջինս կարող է դառնալ լրատվամիջոցների թիրախը՝ հասարակությանը ներկայանալով որպես ոչ ուսյալ, չդիպլոմավորված մասնագետ, ինչը կազդի վերջինիս դրական իմիջին<sup>5</sup>:

Մա թերևս ստիպում է շատերին ավագ դպրոցն ավարտելուց հետո մասնագիտություն ստանալ բարձրագույն ուսումնական հաստատություններում, քոլեջներում, ինչի արդյունքում մեծանում է նաև հետագայում լավ աշխատանքի անցնելու հնարավորությունը: Իրավիճակը նույնն է մյուս զարգացած երկրներում. չդիպլոմավորված քաղաքական գործիչները կարող են «ոչնչացվել»:

Ներկայում Արևմուտքում խիստ ընդունված է, որ քաղաքական գործիչն ունենա ոչ միայն մեկ կրթություն կամ կրթական աստիճան: Այս համատեքստում լավագույն օրինակը թերևս ԱՄՆ 44-րդ նախագահ Բարաք Օբաման է, որը կրթություն է ստացել ոչ միայն Օկսֆորդյան և Հարվարդի համալսարանում ու Հարվարդի իրավաբանական դպրոցում: Հատկապես Հարվարդում ունեցած դասախոսական կարիերայի և Իրա-

վաբանական դպրոցում ծավալած ակտիվ գործունեության փաստն անընդհատ շեշտվում էր նրա՝ ԱՄՆ 2008 թ. նախագահական ընտրությունների նախընտրական շրջանում<sup>6</sup>: Նախագահի թեկնածու Բ. Օբամայի՝ որպես ամենակարևոր արժեք կամ մրցակիցների հանդեպ առավելություն ներկայացվում էր նրա որակյալ կրթությունը և գիտականի հաջող համբավը, ինչը, վերջիվերջո, որոշակի ազդեցություն ունեցավ ընտրողների շրջանում: Մեդիան ի դեմս Բ. Օբամայի ստեղծեց նաև բարեկիրթ մարդու իմիջ: Կրթական տարբեր աստիճաններ ունենալը օգնեց Բ. Օբամային, նախընտրական արշավը կազմակերպողներին կառուցելու ուսյալ քաղաքացու և պետական գործչի քաղաքական իմիջ:

Որոշ դեպքում քաղաքական իմիջի ձևավորման համար դրական ազդեցություն է ունենում նաև քաղաքական գործիչների, լիդերների արտասահմանում ստացած կրթությունը: Արտերկրում ստացած կրթությունը ներկայացվում է որպես տեղական կրթություն ունեցող մրցակիցների հանդեպ առավելություն: Օրինակ, տարիներ առաջ կատարված հետազոտության համաձայն՝ շուրջ 71 տոկոս են կազմում Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի և Թուրքիայի՝ արտերկրում բարձրագույն կրթություն ստացած քաղաքական լիդերները<sup>7</sup>: Գրեթե նույնօրինակ պատկեր ենք տեսնում նաև Քենիայի, Նիգերիայի և Հարավային Աֆրիկայի քաղաքական առաջնորդների մոտ: Հակառակ երևույթ է առկա Ավստրիայի, Գերմանիայի և Նիդեռլանդների քաղաքական էլիտայի շրջանում: Նշյալ երկրների քաղաքական լիդերների 96 տոկոսը ստացել է կրթություն սեփական երկրի սահմաններում: Մի փոքր

<sup>5</sup> St' u Hunt R.A., Running for high office without higher education, The International New York Times, հրատարակված է փետրվարի 2, 2015թ., հասանելի է՝ [https://www.nytimes.com/2015/02/02/us/politics/running-for-high-office-without-higher-education.html]:

<sup>6</sup> St' u ԱՄՆ Սպիտակ տան պաշտոնական կայքում երկրի 44-րդ նախագահի կենսագրության մեջ կարևոր կետ է նշվում Օբամայի՝ «Harvard Law Review» հանդեսի պատմության առաջին աֆրոամերիկացի խմբագիր լինելու փաստը: Առավել մանրամասն Բարաք Օբամայի կենսագրությանը կարող էք ծանոթանալ Սպիտակ տան պաշտոնական կայքում, տե՛ս The 44th US President Barack Obama էջը, հասանելի էր՝ 18.02.2018-ին՝ [https://www.whitehouse.gov/about-the-white-house/presidents/barack-obama/]

<sup>7</sup> St' u Blochinger S., What do the world's most successful people study?, British Council, հրատարակված է հունիսի 1, 2015թ., հասանելի է՝ [https://www.britishcouncil.org/voices-magazine/what-do-worlds-most-successful-people-study]:

քիչ՝ 91 տոկոս է կազմում Արգենտինայի, Բրազիլիայի, ինչպես նաև Մեքսիկայի քաղաքական լիդերների՝ սեփական երկրում բարձրագույն կրթություն ստացած լինելու ցուցանիշը<sup>8</sup>:

Ի տարբերություն ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի քաղաքական գործիչների՝ Հայաստանում շատ քչերը քաղաքական գործիչներից ունեն պատշաճ բարձրագույն կրթություն, որը, սակայն, ոչ մի կերպ չի էլ խոչընդոտում, որ վերջիններս ղեկավար պաշտոններ զբաղեցնեն երկրի օրենսդիր և գործադիր մարմիններում, պետական համակարգում, ընտրվեն որպես երկրի Ազգային ժողովի պատգամավոր: Այն, որ հայաստանյան քաղաքական գործիչներից, մասնավորապես Ազգային ժողովի պատգամավորներից շատերի մոտ բարձրագույն կրթությունը բացակայում է, հայտնի փաստ է<sup>9</sup>: Իրավական և օրենսդրական նորմերով դա խախտում չի համարվում: Այդ կրթության բացակայության արդյունքն է, որ թույլ է տալիս Հայաստանի ԱԺ պատգամավորներից շատերին նիստերի դահլիճ բերել ոչ պաշտոնական, փողոցային բռնապաշար, որը ազատորեն կիրառվում է նաև հանրության հետ շփումներում<sup>10</sup>: 2017 թ. ապրիլի 2-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքում Հայաստանում ձևավորվեց Ազգային ժողովի 6-րդ գումարումը: Մի փոքր փոխվեց ԱԺ պատգամավորների կազմը՝ ներառելով մեծապես կրթված գործիչներին<sup>11</sup>:

Մեդիան մշտապես ուշադրության կենտրոնում է պահում քաղաքական գործիչներին: Իմիջի ստեղծման առումով բարձրագույն կրթության առկայությունը հաճախ օգնում է թեկնածուին կամ արդեն պաշտոն զբաղեցնող գործչին ընտրողներին ներկայանալ հնարավորինս դրական հատկանիշներով<sup>12</sup>:

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>9</sup> Տե՛ս **Ալբրահամյան Ա.**, Ինչպես սարքել մեխանիզմը, «Առավոտ» օրաթերթ, հրապարակվել է հունվարի 9, 2013թ., հասանելի է [\[http://www.aravot.am/2013/01/09/315595/\]](http://www.aravot.am/2013/01/09/315595/)

<sup>10</sup> Տե՛ս «Համբալների» և «կազմիչների» ժամանակը, «AraratNews» լրատվական, հրապարակվել է ղեկտեմբերի 23, 2013թ., հասանելի էր 18/02.2018-ին՝ [\[http://araratnews.am/hամբալների-և-կազմիչների-ժամանակ/\]](http://araratnews.am/hամբալների-և-կազմիչների-ժամանակ/)

<sup>11</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 6-րդ գումարման պատգամավորներ, ցանկը հասանելի է՝ [\[http://www.parliament.am/deputies.php?lang=arm\]](http://www.parliament.am/deputies.php?lang=arm)

<sup>12</sup> Տե՛ս Հակոբյան Ա., Արտասահմանում կրթված Շիրակի մարզպետի նորարարությունը, «Հրապարակ» օրաթերթ,

Մեդիան օգնում է կիրթ մարդկանց հանրահռչակվել: Անգամ համաշխարհային մեծ ճանաչում ունեցող, բայց մասնագիտական կրթություն չստացած մարդիկ, այդ թվում նաև Բիլ Գեյթսը, Հենրի Ֆորդը, Ալբերտ Այնշթայնը մարդու՝ կրթություն ստանալու իրավունքը համարել են որպես առաջնահերթ, խիստ կարևորություն: Իհարկե, գուցե վերջիններիս օրինակից կարծիք ստեղծվի, թե կրթված լինելը կարևոր չէ կամ որևէ արժեք չկա այն բանում, թե ինչ կրթական աստիճան ունի մարդը, սակայն քաղաքականության մեջ, ի տարբերություն բիզնեսի կամ այլ ոլորտների, կրթված լինելը պարտադիր է: Այն օգնում է նաև քաղաքական PR-ով զբաղվողներին հեշտորեն ռազմավարություն մշակել. մեկ բան է ներկայացնել կրթված մարդու, մեկ այլ բան՝ թերուսին:

Եթե քաղաքական լիդերը չունենա պատշաճ գրագիտություն, չկարողանա իրադարձությունների պատճառահետևանքային վերլուծություններն ինքնուրույն անել, շփվել հասարակության հետ, ապա շատ դժվար է կանխատեսել, թե ինչպես կարող է նա հաջողել քաղաքականության մեջ ու քաղաքական գործընթացների ժամանակ: 21-րդ դարում մեդիան չափազանց ուշադիր է և մեծ տեղ է տալիս քաղաքական գործիչների արտահայտած մտքերին: Հաճախ անզույժ և հապշտապ արտահայտած մտքերը կարող են վերածվել ծաղրուծանակի առարկա: Օրինակ, քաղաքական և հասարակական գործիչների՝ 2017 թ.-ին արած տասը զավեշտալի հայտարարությունները ի մի էր բերել «ՄիվիլՆեթ» առցանց հեռուստաընկերությունը<sup>13</sup>:

Սեփական քաղաքական գործիչների անգրագիտությունը չարիք է հասարակության համար: Սա անգամ Թոմաս Հոբսն էր պնդում, ըստ որի՝ կրթությունը խիստ կարևոր պայման է երկրի քաղաքական կայունության համար: Կրթության՝ քաղաքական կայունության գործիք լինելու նշանակությունը տարիներ շարունակ եղել է նաև գիտնականների քննարկման

հրապարակվել է՝ հունվարի 31, 2018թ., հասանելի է՝ [\[https://www.hrarak.am/posts/5a719b1219479f2b73018194\]](https://www.hrarak.am/posts/5a719b1219479f2b73018194)

<sup>13</sup> Տե՛ս «2017-ի 10 բոցերը», «ՄիվիլՆեթ» առցանց հեռուստաընկերություն, հրապարակվել է՝ ղեկտեմբերի 30, 2017թ., հասանելի է՝ [\[https://youtu.be/W1DQM-8Ta-c\]](https://youtu.be/W1DQM-8Ta-c)

շրջանակում<sup>14</sup>: Եթե հասարակությունը չունի լավ կրթված, բանիմաց լիդերներ և ղեկավարներ, ապա այն միտված է դեպի ոչնչացում: Կիրթ լիդերն է, որ կիրթ հասարակության կարիք ունի:

Կրթության վերաբերյալ Թոմաս Նոբսը բավականին հետաքրքիր մեկ օրինակ է բերում. «Ոչ ոք չի գնա կովեյու այն արքայի համար, ով ոչ լեզվիտիմ է: Իհարկե, գուցե այդ ոչ լեզվիտիմ թագավորը կկարողանա իր շարքերում մի քանի վարձու զինվորներ պահել, սակայն վերջիններս ամեն պահի կարող են լքել արքային, երբ նա չկարողանա վճարել իրենց գումար: Իսկ եթե արքան կրթված լինի, ապա նա իշխանությունը պահելու համար երբեք չի դիմի վարձկան զինվորներին՝ կանխատեսելով իր մոտավուտ վախճանը»<sup>15</sup>: Վստահաբար կրթված լիդերն ինքն առաջինը կլքի իր զբաղեցրած պաշտոնը, երբ կհասկանա, որ իր ընտրած ուղեգիծը ժողովրդին տանում է դեպի կործանում: Անկիրթ և ոչ լուսավորյալ գաղափարների հետևորդ լիդերը, ընդհակառակը, կարող է ապակայունացնել երկիրը<sup>16</sup>: Սա ոչ խրախուսելի միտում է Հայաստանում և հետխորհրդային մի շարք երկրներում, որը, սակայն, վաղուց հասկացել են ու քաղաքական կիրառությունից դուրս մղել բազում զարգացած երկրներում՝ այդ թվում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Կանադայում, Ավստրալիայում, Մեծ Բրիտանիայում և Եվրոպական միության անդամ մի շարք երկրներում: Հասկանալով, որ լավ կրթությունը կարող է խարսխել քաղաքական գործչի դրական ու ցանկալի իմիջը մեղիայում ձևավորելու հարցում, նախընտրական արշավներ կազմակերպող մասնագետի համար կարևորություն ունի քաղաքական թեկնածու ունեցած կրթական ցենզը: Այն ոչ պատշաճ լինելու դեպքում կարող են ի հայտ գալ քննարկումներ, որոնք կարող են մեծ ազդեցություն ունենալ սովյալ քաղաքական գործչի կարիերայի վրա: Մեղիան կարող է ծաղրի առարկա դարձնել քաղաքական թեկնածուներին, եթե նրանք չունեն իրենց կողմից զբաղեցրած պաշտոնին

համապատասխան կրթություն և անձնական հատկանիշներ, կամ ստացել են կեղծ դիպլոմ՝ «գնելով» սեփական կրթությունը<sup>17</sup>:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ զարգացած հասարակությունների քաղաքական էլիտաները հիմնականում կրթվածության բարձր մակարդակ ունեն: Բացի այդ, նրանք միտված են հասարակության շրջանում կրթության դերի բարձրացման: Հետազոտողները դեռ տարիներ առաջ եկել են այն եզրահանգման, որ գրեթե բոլոր հասարակական ցնցումները տեղի են ունեցել կրթված մարդկանց ջանքերով<sup>18</sup>: Վերջիններս կարողացել են շարժիչ լինել, զարգացող երկրներում ինչ-որ բաներ փոփոխել՝ տապալելով հին ռեժիմը կամ ստեղծելով նորը: Հեղափոխական առաջնորդներից շատերը հաճախել են բարձրակարգ դպրոցներ՝ ստանալով լավ ու որակյալ ուսուցում: Կրթությունը դարեր ի վեր եղել և շարունակում է մնալ քաղաքական զարգացման հիմնական գործիքը: Նշյալը հաշվի առնելով ու հիմք ընդունելով՝ քաղաքական գործիչների իմիջ կերտողները ինչպես նախկինում, այնպես էլ ներկայում մեծ դերակատարում են տալիս գործչի կրթությանը, անում են հնարավոր ամեն ինչ այն հանրային քննարկում դարձնելու համար, եթե քաղաքական գործիչն ունի լավ և նշանակալի կրթություն: Հակառակ դեպքում, ամեն ինչ արվում է իրականությունը թաքցնելու, կրթության դերն անձնական հատկանիշների կամ այլ արժանիքի հաշվին որոշակիորեն նսեմացնելու համար: Սակայն փակել այս բացը խիստ դժվար է:

Ի վերջո, ի՞նչ է տալիս կրթությունը քաղաքական գործչին: Առաջին հերթին կրթության շնորհիվ է մարդը կարողանում մտնել քաղաքականության և քաղաքական գործընթացների մեջ: Առանց պատշաճ գիտելիքների դժվար է 21-րդ դարում պատկերացնել հարգված քաղաքական գործչի: Բազմաթիվ երկրներում քաղաքական մշակույթը պահանջում է, որ քաղաքականություն մուտք գործելու համար

<sup>14</sup> Տե՛ս *Anderson J.*, The role of education in political stability, *Hobbes Studies*, Volume 16, Issue 1, 2003, pp. 95-99

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>16</sup> Տե՛ս *Meyer W.J., Rubinson R.*, Education and Political Development, *Review of Research in Education*, Vol. 3 (1975), pp. 134-162

<sup>17</sup> Տե՛ս *Ahmedzade T.*, The curious case of the Turkish President's degree, *BBC News*, հրատարակվել է՝ հունիսի 3, 2016թ., հասանելի է՝ [<http://www.bbc.com/news/blogs-trending-36436200>]

<sup>18</sup> Տե՛ս *Meyer W.J., Rubinson R.*, Education and Political Development, *Review of Research in Education*, Vol. 3 (1975), pp. 134-162

անհրաժեշտ է կրթական գոն նվազագույն աստիճան ունենալ, ինչը «մուտքի վիզա» է, որով հնարավորություն է տրվում քաղաքականության մեջ հանդես գալ որպես ակտիվ «խաղացող»:

Ամփոփելով նշենք՝ զարգացած երկրներում վիթխարի ուշադրություն է սևեռվում քաղաքական գործիչների ստացած կրթությանը: Քաղաքական իմիջմեյքերները գիտեն ճիշտ կողմնորոշվել իրենց գործատուների՝ քաղաքական գործիչների ստացած կրթությունը հանրությանը՝ ընտրելու իրավունք ունեցողներին ներկայացնելու այնպես, որ ակամայից ստեղծվի դրական իմիջ գործչի ստացած կրթության և որակավորումների վերաբերյալ: Օրինակ՝ ԱՄՆ-ում պատմականորեն ձևավորված ներկայիս քաղաքական համակարգն այնպիսին է, որ միայն կրթություն ստացած մարդն է ունակ առաջ շարժվելու քաղաքական աստիճաններով: Դոնալդ Թրամփի<sup>19</sup>՝ ԱՄՆ 45-րդ նախագահի՝ կենսագրության մեջ մեծ տեղ է գրավում ստացած կրթությունը, չնայած նախագահ Դ. Թրամփի կիրառած բառապաշարը և հանրային վարվելակերպը ստեղծել է հասարակական տարատեսակ քննարկումների առիթ:

---

<sup>19</sup> ԱՄՆ Սպիտակ տան պաշտոնական կայքում երկրի 45-րդ նախագահի կենսագրության մեջ նշված է, որ Դոնալդ Թրամփը Փենսիլվանիայի համալսարանի շրջանավարտ է և ուսումնառել է Ուիարթոն ֆինանսական դպրոցում, ինչը հիմք է հանդիսացել բիզնեսում հաջողություններ գրացնելու համար: Առավել մանրամասն Դոնալդ Թրամփի կենսագրությանը կարող եք ծանոթանալ Սպիտակ տան պաշտոնական կայքում, տե՛ս [https://www.whitehouse.gov/people/donald-j-trump/]